

Հայ գրականության հանրապետական օլիմպիադա

2019-2020 ուստարի

(տևողությամբ ունը՝ 180 րոպե)

Միբելի՛ մասնակից, օլիմպիադային մասնակցի՛ր հաղթելու կամքով, հաղթանակը սրբագործի՛ր հայ գրականության նկատմամբ ունեցած հպարտության և խորին ակնածանքի զգացումով:

Հավատով՝ Ս. Աբազյան

XII դասարան:

1. Մարդու և Աստծո հաշտության ուխտը Հովհաննես Շիրազի «Բիրլիականը» պոեմում: Ե՞րբ է գրվել պոեմը:

5մ.

2. Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի» վեպի արդիական արձագանքները: Գտի՛ր նման կամ տարբեր հերոսներ այսօրվա սփյուռքում. պատմի՛ր որևէ մեկի մասին:

5մ.

3. Վերլուծի՛ր Վիլյամ Մարոյանի «Հայր և հայր» պատմվածքը: Մեկնաբանի՛ր գրույցի վերջաբանը:

5մ.

4. Կարո՞ղ ես բանաստեղծությամբ պատասխանել Սիլվա Կապուտիկյանի «Կարոտի պահին» (Արի~, արի~...) բանաստեղծությանը: Եթե՛ ոչ, վերլուծի՛ր:

Արի~, արի~, արի~

Թեկուզ անսեր, անսիրտ

Թեկուզ վերջին անգամ

Թեկուզ հեզնող ու խիստ

Թեկուզ քայլով դժկամ

Թեկուզ խայթող ու բիրտ

Միայն արի~, արի~:

Միայն արի~, արի~:

Թեկուզ բերես դու ինձ

Թեկուզ բերես դու ինձ

Նոր բաժանման թախիծ

Մի նոր դավի կսկիծ

Անդարձ գնաս նորից

Թեկուզ ուրիշ գրկից

Միայն արի~, արի~:

Միայն արի~, արի~:

5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան

Գնահատման չափանիշներ

1. 1-ին հարց. 1-ին ենթահարց՝ 4մ., 2-րդ ենթահարց՝ 1 մ.:

2-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 1միավոր, 2-րդ և 3-րդ ենթահարցերը՝ 2-ական միավոր:

3-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 3միավոր, 2-րդ ենթահարց՝ 2միավոր:

4-րդ հարց՝ 5 միավոր:

Ընդամենը՝ 20 միավոր:

Պատասխաններ

1. Չարենցի անկրկնելի բնութագրմամբ՝ չնայած «Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության», բայց իրական Արարատին ձուլվելու, Մասիսվելու մեծագույն իրավունքը Շիրազինն է, քանի որ Արարատի ձյունների մեջ հանգչում է նրա Մասիսապաշտ սիրտը այն անբեկանելի հավատով, որ բանտված հսկան, ի վերջո, հաշտեցնելու է հային ու հայից խռոված Աստծուն՝ վերադարձնելով այն բիրլիական աշխարհին, որտեղ իջավ Նոյը և տնկեց խաղողի առաջին որթը:

Ահա այդ Մասիսի հետ ու նրա համար մարտնչելով է Շիրազը հասել իր տաղանդավոր մտքի կրակե պոռթկմանը, որը կոչվում է «Բիրլիական»- Աստվածաշնչյան:

Այս պոեմը տիեզերքի մեջ մարդու տեղն ու դերը որոշելու մտայնության խտացումն է, մարդու անպարտելիության փառաբանումը, աստվածացումը և Աստծու մարդացումը. «Այնինչ նիրհում է Աստված իր հոգում»... Շիրազյան մարդը ամեն վայրկյան պետք է արթնացնի իր մեջ ննջող Աստծուն, որպեսզի կարողանա տանել ամենաանտանելին՝ Ցավը: Ցավն ու տառապանքն են մաքրագործում մարդուն. չէ՞ որ դեռ իր տաղանդավոր նախորդն էր բանաձևում. «Տառապանքն է, որ կմաքրագործե հոգին», ուրեմն՝ կատարելության հասնելու ճանապարհը սկսվում է ինքնամաքրումով, ինչն էլ իմաստավորում է կատարելության հասնելու մարդկային ձգտումը: Այսինքն՝ կատարյալը մարդու մեջ է և դրան հասնելու միակ ուղին ներքին պայքարն է, որը նրան կհասցնի իր երազած Աստծուն: Մարդուն կատարյալ տեսնելու Նարեկացիական բանաձևը նույնպես իմքնամաքրումն է, ներքին պայքարը, մաքուր ակունքների ձգտումը: Հասնել իր Ստեղծողին՝ ինքն իր մեջ որոնելով Նրան: Պոեմը գրվել է Հայրենականի տարիներին, երբ մարդը անլուր չարությամբ ընդվզել էր Աստծու և ինքն իր դեմ, երբ ընչաքաղց տիրողները, հեռանալով հողից, հող էին խլում միմյանցից՝ այդ հողում հաստատելով նախաստեղծ մարդուն տրված առաջին անեծքը՝ «Հողից ելար, Ադամ, նորից վերադարձի՛ր հող»:

Ահա այս անհասկանալի սողմագոմորյան խառնակության մեջ էր ողջ աշխարհը, երբ Շիրազը հայտնագործեց պայքարի ու հաղթանակի մարդուն: Պոեմը փիլիսոփայական է, բնույթով՝ քնարական, ունի գործողությունների ներքին զարգացում: Այն ունի բնաբան՝ վերցված ժողովրդական իմաստությունից. «Ցավը տվեց սարերին, սարերը չտարան, ցավը տվեց մարդուն, մարդը տարավ»: Հենց մուտքից հասկացվում է, որ պիտի տեսնենք ամենակարող մարդուն: Մարդկային չիրագործված երազանքների, հավերժական որոնումների ու ձգտումների, մարդու ամենակարող և անթերի վիճակը կրող Աստծո որոնումը մարդը գտնում է հենց Աստծո մեջ:

Աստված ստեղծում է տիեզերքն ու համայն աշխարհը և իր բարիքներն ու շնորհները բաժանում իր ստեղծածներին. «Լույսի հրճվանքը տվեց երկնքին», «կապույտ ծիծաղը ծովին ծավալեց», «ճերմակ ժպիտը սփռեց ձյուններին», ամեն ինչ բաժանեց և հանկարծ նկատեց, որ իր մոտ է մնացել «վշտի ծովը»: Մտածում է Աստված՝ ո՞ւմ տա վիշտը, ո՞վ ունի այնքան խոր ու մեծ սիրտ, որ կարողանա վիշտն անխռով տանել: Աստված վիշտը տվեց ծաղիկներին ու զազաններին, ծաղիկներն իսկույն թոշնեցին, զազաններն իրենց անբառ կաղկանձը որպես անեծք շարտեցին լուսնին: Վշտին չեն դիմանում անսասան լեռները՝ վերածվելով անդնդախոր ձորերի, դաշտերն անապատանում են, ծովերը փոթորկվում են, երկինքն ամպ ու որոտով կարկուտ է տեղում, աստղերը վերածվում են ասուպների: Եվ սարսափելով այն մտքից, որ ցավը կարող է մնալ իրեն և տեսնելով անհոգ մարդուն, որ ծիծաղում էր վագրի գրկում. ցավը տալիս է նրան: Մարդն անմիջապես զգում է, որ ամենամեծ վիշտը մահն է՝

Եվ կովի ելավ մահվան դեմ մահով:

Եվ իմաստնանում է մարդը ու կարողանում է տանել վիշտը՝ վշտին հաղթելով՝ դարձավ իմաստուն: Մահը դառնում է ամենակարող, և Աստված անհայտ ոգու միջոցով նրան է ժառանգում տիեզերքը, որ մարդը դառնա տիեզերքի արքան, հրաշքներ ծնի, որ՝

Եվ իմաստնացած կգնաս այդպես,

Դարերի անտես սանդուղքով կելնես

Դեպի կատարը կատարելության...

Ըստ Շիրազի՝ վիշտը դառնում է ոգու ներդաշնկության ճանապարհը, ինքնաճանաչման լիարժեք սահմանը: Շիրազը տիեզերական անվերջության մեջ փառաբանում է ամենագոր մարդուն, իսկ մարդու մեջ՝ նիրհում է Աստված:

Անգուգական այս հրաշքը՝ «Բիրլիականը», բանաստեղծի մեծագույն փառաբանությունն է առ Մարդն և առ Աստված:

2.1915-ի աստվածամերժ ցեղասպանությունից հետո աշխարհը բացեց իր դռները տարաբախտ ու տարազիր հայության բզկտված բեկորների առջև, իր գիրկն առավ ու թելադրեց իր անխուսափելի օրենքները: Այդ բեկորները հանգրվանեցին Ֆրանսիայում, Ամերիկայում, Հունաստանում, Լիբանանում ու Սիրիայում, աշխարհի գրեթե բոլոր ծագերում և սկսեցին ծլարձակել: Ծլարձակվեց Աստծո կողմից մոռացված և «Անմոռուկ» անունն ստացած հայ ժողովրդի մի հատվածը՝ հիմնելով դպրոցներ, կրթարաններ, մամուլ, կառուցելով հավատի տներ՝ կրկին ապավինելով Աստծո ողորմածությանը, արարելու՝ ապավինելով իր կամքին և հյուրընկալ պետությունների մարդասիրությանը: Տարագրված բեկորները երախտահատույց եղան իրենց հյուրընկալված երկրներին՝ մասնակցելով այդ երկրների ազգային- ազատագրական պայքարին (Միսաք Մանուշյան), հարստացրին նրանց մշակույթը (Շառլ Ազնավուր, Անրի Վերնոյ, Մայքլ Առլեն, Վիլյամ Մարոյան, Ալիսիա կիրակոսյան և բազում այլք): Ահա այս բեկորներից էր Ֆրանսիայում հանգրվանած Շահան Շահնուրը, որը և դարձավ նահանջի առաջին շեփորահարը. սարսափով տեսնելով հայության բեկորների ուժացումը՝ նա աղաղակում էր. «Մենք՝ հայության այս թևը, դատապարտված ենք մահվան», պիտի պայքարել, զոհն պահել սփյուռքահայությանը. «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ընթոնում, բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ ու գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛, մեղա՛ Արարատին», - ասհազանգում է Շահնուրը «Նահանջը առանց երգի», վեպում, ապա այս թեման ավելի հրատապ ու հրակեզ դարձնում «Հարավեզներուն դավաճանությունը» պատմվածքում. «Սերը նվաղած է մեր մեջ, բայց չի անհետացած, հույսը նվաղած է, բայց չի անհետացած... շող մը միայն ճաճանչե և մեզ ժողվե բոլոր քառուղիներեն, բոլոր ծովափերեն ու բանտերեն, բոլոր լեզուներեն», բայց նա կասկածում է, որ մեր հարավեզները ևս կարող են դավաճանել, և պահանջում ու հորդորում է՝ պայքարել բանիվ ու գործով...

Շահնուրի շեփորականչը ուղղված է բոլոր նրանց, ովքեր լքում են հայրենիքը հանուն իրենց «ինքնասիրության», մերժվածության, նյութականխ... հայրենիքը հեռվից սիրելը ու խորհուրդներ տալը անբարո է, պետք է հետևել Դուրյանի պատգամին՝

..... Հայրենիք մը ունիմ թշվառ, Չօգնած անոր՝ մեռնիլ աննշան, ո՛հ այս է սոսկ ցավ ինձ համար... Սիրելի՛ սփյուռքահայ, սիրելի՛ հասակակից, վերադարձի՛ր՝ Արարատի հովանու ներքո շենացնելու մեր դրախտավայր հայրենիքը, ճեղքելու սգավոր Արաքսի հորձանքները և հետ բերելու Նահապետին, որի գագաթի ձյունները արցունքի սառած օվկիանոս են, վերադարձի՛ր, փայփայի՛ր խաղողի որթը, որի անապական զինով լեցուն բաժակդ «խփիր Արարատ սարին» ու խմիր քո ստեղծարար ժողովրդի կենացը, վերադարձի՛ր և Նորքի բարձունքից «կարմիր հրավեր» կարդա քո բոլոր հայրենակիցներին, վերադարձի՛ր... Ականջալուր եղի՛ր Շահնուրի պատգամին. «Ժողովուրդը, մեծարելով հեղինակին, կը մեծարե գաղափար մը, որ միաժամանակ առաջադրություն մըն է՝ զիտակցիլ օտարացման վտանգին և դեմ դնել անոր: Այդ գաղափարը ազգին էր, իմս ըլլալէ առաջ: Ան կեռար ու կբորբոքեր գաղթական ժողովուրդին մեջ, երբ եկավ ու բյուեղացավ զանազան երկերու մեջ, որոնցմէ մեկն էր միայն «Նահանջը»»:

3. Վիլյամ Մարոյանը՝ բարի հսկան (ինչպես իրավամբ անվանել է Վահագն Դավթյանը հանճարեղ գրողին), Հայաստանի լեռներում է թողել իր հրկեզ ու կարոտավառ սիրտը, այդ լեռներից է նա հնչեցրել բարության իր շեփորը, պղնձե փողերով նա փառաբանել է բարությունը, իսկ բարությունը ոչ այլ ինչ է, քան լույս, գուրթ, խիղճ... Ռուս նշանավոր գրող Ալեքսանդր Չակովսկին խոստովանել է. «Արտասահմանյան շատ գրողների եմ հանդիպել, այո՛, բայց ինձ վրա ամենամեծ տպավորությունը թողել է Վիլյամ Մարոյանը... Յոթանասունն անց այդ մարդը հրաբուխ է... Եթե շտ գրողներ մտածում են, թե իրենց գործերն ապագայում ինչ փառք կբերեն իրենց, ապա Մարոյանը մտածում է, թե իր գործերը կկարողանան՝ ապագայում թեկուզև մի փոքր ազնվացնել աշխարհը...»: Մարոյանը ոչ միայն ազնվացրեց աշխարհը, այլև այդ ազնվությունը դարձրեց պատգամ. «Փնտրի՛ր բարին ամենուրեք ու երբ գտնես, դուրս բեր թաքստոցից, և թող նա լինի ազատ ու աներկյուղ... Արթնացրո՛ւ առաքինությունը, ում սրտում էլ որ նա գաղտնի ու տրտում թաքնվելիս լինի աշխարհի սարսափներից ու ամորից... Եվ քանի ապրում ես... ոչ մի բան չավելացնես աշխարհի աղետներին ու տխրությանը, այլ ժպտա կեցության անձայր խնդության ու գաղտնիքի հանդեպ»:

1935-ին Մարոյանը ստանում է իր առաջին հոնորարը և այցելում նախնիների բիրլիական օրրանը, զրուցում Արարատի հետ: Այդ ժամանակ նա շրջագայել է նաև Միության բազմաթիվ քաղաքներում.

Եղել է նաև Ռոստովում և ռոստովյան գինետնային մի հանդիպում առիթ էր սովել նրան գրելու «Հայր և հայրը» պատմվածքը՝ հայ ժողովրդի կենսական ուժի մասին մի փոքրիկ գլուխգործոց:

«Ուշ գիշերով Ռոսասատանի Ռոստով քաղաքում մի գարեջրատան մոտով անցնում էի, երբ սպիտակ վերնազգեստով մի սպասավորի տեսա, որն անպայման հայ էր, և, ուրեմն, մոտեցա, հարցրի.

-Իմա՞լ ես, տնավեր, իմա՞լ ես»:

Չգիտեմ՝ ինչից հասկացա, որ հայ է, բայց հասկացա... Պատճառը թուխ դեմքը չէր, ոչ էլ բարձր ու ծուր քիթն ու գանգուր մազերը. այդպիսիք շատ կան :

Պատճառն այժերի անբացատրելի, անթափանց տխրությունն էր, որ ունեն միայն հայերը, և նա էլ զարմանքի շեշտով ասաց.

-Վա՛յ, դու... Ինչպե՞ս հոս ինկար:

-Գաղտուկ,- ասացի խանդաղատանքով,- կքալեի, ո՞րն է քու քաղաքդ, ու՞ր ծնած ես:

-Մուշ,- ասաց,- Ո՞ւր կերթաս, հոս ի՞նչ կընես, դուն ամերիկացի ես, քու նագուստդ ամերիկացու է: Եվ այսպես երկու հայի բեկոր հանդիպում են մի հեռավոր, անծանոթ քաղաքում ու մտերիմի նման զրուցում, ծիծաղից պայթում, ձեռքերով ծնկներին խփում ու գնում Բիթլիս ու Մուշ, որտեղ այլևս հայ չկա, Հայաստան չկա, ու քանի որ Հայաստան չկա, Ամերիկա էլ չկա, Եվրոպա էլ չկա, կա միայն երկիր, կան միայն մարդիկ, որոնք որտեղ էլ հանդիպեն պիտի հարցնեն, հա՞յ ես, և անմիջապես էլ ճանապարհվեն՝ Հայաստանը գտնելու: «Մեր ցեղը զարմանալի մի ցեղ է, և ես ճամփա եմ ընկել Հայաստանը գտնելու»:

_Կուզեի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որը խաթարել կարողանար այս ցեղը, անգոր ժողովրդին, որի պատմությունը պատմված, բոլոր կռիվները մղված ու տանուլ տրված են, շենքերը խորտակված, գրքերը չընթերցված, և որի աղոթքները անպատասխան են մնացած:

Փորձե՛ք կործանել այս ցեղը, ջանացե՛ք, տեսե՛ք կկարողանա՞ք, շունշոնորդիներ, նրանց արգելել, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ գաղափարները, որ աշխարհում երկու հայ չխոսեն իրար հետ, փորձեք ջնջել նրանց: Կործանեցեք Հայաստանը, Տեսեք՝ կկարողանա՞ք: Քշեցեք տներից անապատ, մի՛ մոռացեք խել ճամփի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի մատնեցեք նրանց տներն ու եկեղեցիները: Տեսեք դարձյալ դարձյալ պիտի չապրե՞ն: Տեսեք ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը հանդիպեն աշխարհի որևէ մասում, ծիծաղեն, աղոթեն իրենց մայրենի լեզվով, իրենց նոր ստեղծած Հայաստանում: Մարոյանը համոզված է, որ հենց նրանք պիտի բացեն աշխարհի՝ պատերազմի ծխով բռնված այժերը: Մարոյանն ինքը հաղթական, բնական կյանքն է. «Մարոյանի ոգին հիմա սավառնում է տագնապներով ու հույսերով ողողված երկրի վրա, և երջանիկներից կլինի նա, ում մեջ կբնակվի այդ ոգին»:

4. Հայ գրականության անմրցելի բանաստեղծուհին, հայ ժողովրդի արժանավոր դուստրը՝ Միլվա Կապուտիկյանը, հայրենասիրական, խոհական, քնարական հրաշքներ է ժառանգել մեզ, որոնք մեզ օգնում են ապրել, սիրել, հաղթել... պարտվելով հաղթել: Կապուտիկյանի սիրային քնարերգությունը մեզ հետ է պատանեկան տարիներից մինչև խոր ծերություն: Մենք նրա հետ թափառում ենք՝ «սիրածի անունը պահելով որպես երդում», մենք ներխուժում ենք նրա սենյակ՝ «խառնելով թղթերը, կյանքը, հոգին», կարոտի պահին նրա նման մոռանում ենք ինքնասիրություն ու արժանապատվություն, մենք փակում ենք որոնումի մեր ճանապարհը, բայց, միևնույնն է, մղվում ենք դեպի Մերը, Տառապանքը, Ներումը...

...Կապուտիկյանի բազմաթիվ բանաստեղծություններ երգվում են հոգեկան խռովքի պահին: «Մի՛ լացացնի», «Ասում են, թե», « թե այժերս քեզ որոնեն», «Կարոտի պահին» վաղուց մեր անդավաճան ուղեկիցներն են բոլոր տարիքներում: «Կարոտի պահին» երգի մեղեդին գրել է Սասուն Պասկևիչյանը: Իսկ մյուս բանաստեղծությունների երաժշտությունները սնվել են քաղաքային ֆուլկլորից: Մնացյալը գրի՛ր ինքդ....

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան